Աննա Ալեքսանյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտի գիտական աշխատող: Զբաղվում է «Արևմտահայ կանանց շարժումը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» թեմայի ուսումնասիրությամբ:

Արփիենե Բաբլումյան – պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: Զբաղվում է Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ժողովրդագրության ուսումնասիրության հարցերով սկսած 19-րդ դարի վերջից մինչև 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունն ընկած ժամանակահատվածը:

Արամայիս Բալոյան – պատմական գիտությունների թեկնածու, Մատենադարանի գիտական աշխատող: Զբաղվում է Հայոց ցեղասպանության խնդրում օտար տերությունների (մասնավորապես Իտալիայի) դիրքորոշման ուսումնասիրության հարցերով:

Հայկ Դեմոյան – պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության, Թուրքիայի արտաքին քաղաքականության, Ղարաբաղյան հիմնահարցի, հայ ինքնության և ռազմարվեստի պատմության խնդիրները:

Ռայմունդ Գևորգյան – ֆրանսահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հեղինակ է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների:

Տաթևիկ Ղալթաղչյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատող: Զբաղվում է 1908-1914 թթ. արևմտահայ մամուլի պատմության ուսումնասիրությամբ:

Սուրեն Մանուկյան – պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: Ուսումնասիրում է Հայոց ցեղասպանության մեջ հասարակության տարբեր շերտերի ներգրավվածության հարցը:

Էվա Մերենիչ - Բուդապեշտի Կորվինուս համալսարանի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունների մեջ է մտնում «Հայոց ցեղասպանության ներքին և արտաքին ազդեցությունների» ուսումնասիրությունը:

Արամ Միրզոյան – պատմական գիտությունների թեկնածու: Զբաղվում է Հայոց ցեղասպանության մի շարք հիմնահարցերի, մասնավորապես, հայ պատմագրության մեջ Գերմանիայի մեղսակցության հարցի քննարկման հետազոտությամբ:

Սեդա Պարսամյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող: Զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման խնդիրների ուսումնասիրությամբ:

Ռուբինա Փիրումյան – Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս: Հեղինակ է Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների:

Վարուժան Պողոսյան – պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության

ինստիտուտի գիտական աշխատող: Զբաղվում է ֆրանսիական պատմագրության մեջ Մեծ եղեռնի թեմայի քննարկման ուսումնասիրությամբ:

Հարություն Սելիմյան – Հայ ավետարանչական համաշխարհային խորհրդի նախագահ:

Հասմիկ Ստեփանյան – պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Զբաղվում է հայատառ թուրքերեն գրականության ուսումնասիրությամբ:

Անի Ոսկանյան – ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող: Ուսումնասիրության թեման է «Օսմանյան բանակը և հայ զինվորականությունը նրա կազմում»:

Վերժինե Սվազլյան – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող: Գիտական հետազոտությունների առարկան Հայոց ցեղասպանության վերապրածների հուշերն ու պատմական բնույթի երգերն են:

Իվ Տերնոն – ֆրանսիացի պատմաբան: Հեղինակ է Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների:

Արտեմ Օհանջանյան – ավստրիահայ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ուսումնասիրում է Հայաստանի պատմության և Հայոց ցեղասպանության հիմնահարցերն ըստ ավստրիական վավերագրերի և սկզբնաղբյուրների: